

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
20 ԹԻՐԻ ԽԱՄԱՐ	
Վ. ԼՈՆԴՈՆ	Ֆր. 1.50
Վ. ԼՈՆԴՈՆԻ ՊՈՐՏ	2
Ս. ԲՐԱՏՍԿԱՅԻՆ	2.50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չէն գրութիւնք :
Նամակ գրամ և այլն գրելու հե-
տեւող հասցէին ,
Վ. ԱՐՁՈՒԹԻՒՆ, « ԿԱՏԱԿ » Ի
Վ. ԼՈՆԴՈՆ (Պոստօրէն) :

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието
„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հատար 7 1/2 Սանթիմ

Administration du journal
« GADAG »
VARNA. (Bulgarie).

ԿԱՐԵՒՈՐ ԱՂԳ

« Դատարար » քառերորդ թիւը լրանա-
լու մօտ է , որմէ ետքը պիտի հրատա-
րակուի « Տաւրոս » անուամբ քաղաքական
և ազգային , մեծադիր ծաւալով :

« Տաւրոս » ի տարեկան բաժնեկիւնն է
Պոլսկարիոյ համար 10 և արտասահմանի
համար 12 ֆրանք կանխիկ :

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Աղքատութիւնը իր մերկ վիճակին մէջ :
Ամբթիւսածութիւնն ալ չարացած է հա-
յակարօտ աղքատին քով , ի՞նչ ընէ խեղ-
ճը , չէ և չիայ բառին առջեւ կը տեսնուի
կը մնայ թշուառը և չուզեր ըսել չկայի
անախորժ ձայնը , և ի՞նչպէս լսէ , ի՞նչ
պէս համոզուի և առանց պատառ մը
հայ տառնալու դառնայ իր չքաւոր նը-
կուղը՝ ուր կ'սպասեն իր մերկիկներն
աչքերնին դուռը յառած , պատկառի՞ ,
տանջի՞ խորժի՞ , բայց ի՞նչ պատասխանէ ,
երբ դառնայ ու իր փոքրիկները սկսին
աղաղակել , մաշքիկ հայց , մայրիկ հայց :
Տեսարանը զարհուրեցիկ է ու պատկերը
սրտաճմկիկ , հայր ու մայր եղբոր միայն
կրնայ հասկնալ անօթի զաւկին հայց ,

հայց աղաղակին նշանակութիւնն : Ով որ
կուղէ այս եղբորական թաւառն տեսնել ,
մի օր թող փորձէ այցելել Այլասախնաւն
և անցնի Պ. Ամիրխանեանի տան առջեւէն
ու դիտէ տեսարանը , փայտէ կամ քարէ
եղած պիտի լինի մարդ , եթէ խայթ մը
չիմանայ իր ներքը ի տես այդ հաքիւրա-
ւոր թշուառաց , որոնք բոսիկ բայց դժ-
մերկ՝ սակայն անդանդատ , միայն հայցի
պակասն է որ զիրենք այդքան ցածցու-
ցած ու քծնելու չափ նուստապուցած է :
Ո՛ր ես Աստուած , եթէ այս անհաւա-
ռարութիւնն ալ դու ստեղծեցիր , քու
ալ օրէնքներդ արդար չեն . իսկ եթէ
միարդ թշուառին համբերութիւնն և
ունեւորին կարեկցութիւնն է փորձել ,
բաւական է այլ եւս , տասն եւ ինը դարէ
ի վեր քեզ ծնրաղբող : քեզ մամ վառող
ու խուճի ծխող քրիստոնեայ հայուն դը-
թութիւն ըրէ և բու արդարութեան
հայհոյող բռնակալ թուրքի ձեռքէն ա-
զատէ :

Ամենուն բերանն է Աղքատախնամը ,
առանց մտածուելու սակայն թէ ի՞նչ
գրուած է այդ նորահաստատ մարմնոյ
գանձանակին մէջ , մինչդեռ գանձանակ
ի ձեռին փողոցէ փողոց չըջած ժամանակ-
նին իսկ հինգ սանթիմ գլացողներն կ'ու-

ղեն Աղքատախնամի վրայ ծանրացնել
ամեն բան, մինչև անգամ ազգը ամ-
բող թշուառութեան ու մուրացկանու-
թեան հասցենքու պատճառ եղող յեղա-
փոխականներէն մին այսպէս կը բացա-
դանէ երբ իրմէ ալ միքանի կողէկ կ'ուզ-
ուի « Ես էսպէս բաների փող չեմ տալիս » :

Խմայի՛ր, Հայ ժողովուրդ, քեզ պիտի
փրկենք՝ ըսող յեղափոխականի ըսածը .
նորա իսկական վարդապետութիւնն է՝
բոլոր ժողովուրդը կոտորուի ու ջնջուի,
բաւական է որ յեղափոխականը ազատ
ու հանդիսա մնայ : Այսպէս չէ՞ր միթէ
Պանգոյի 17ներուն պայմանը — մեզի
ողջ դուրս հանեցէք ու Պոլիսը ամբողջ
ջարդեցէք — եւ երբ Պոլսոյ փողոցները
արիւն կը հոսէին, Պանգոյի հերոսները
չագնաւին մէջ պար քոնած կ'երգէին
յաւթակ ուրախութեան երգը :

Սակայն ինչ որ ալ լինի, պէտք է մեր
աղատող մեր մէջը ըսանք, աղքատ թէ
թշուառ մեր եղբայրներուն, մեր քոյրե-
րուն կարեկից աչքը նայինք : Օժանգակել
Աղքատախնամին՝ նուիրական պարտա-
կանութիւն մ'է որ կարողանայ կարելի-
ութեան սահմանին մէջ դարմանել դէթ
ամենաթշուառներն :

Սակայն կը յտւինք որ կը գտնուին
երբեմն անձինք որ իրենց աղքատութիւնը
ոնպատշաճ եղանակաւ կ'ուզեն ցոյց տալ,
պարկեշտութիւնը աւելի աղքատութեան
մէջ պահպանելն է կը պարծինք. ըստ
այնմ ինամակալք՝ իբր ինամածու հայր
պէտք է քաղցր վարուին աղքատու-
թեամբ ճշտած ու պակասութիւննե-
րով բռնաւորութեամբ կարօտեալներու հետ
և ժողովուրդն ալ նկատի առնելով նը-
պատի գանձանակի գատարկութիւնն
կըր ճշմարիտ Հայ քաղաքավարութեամբ
վարուի և շատ ալ խոտապահանջ չը լի-
նի, վասն զի չը կային ուղիւ ամեն

ուժեր կը ընեն, մայրենիք որ զթա-
յողները շատնան որով և կարօտեալք
չը տաւապին :

Յ. ՉԱՔՐԵԱՆ

ԵՐԱՁ

Հնչակեանի եւ Դրօսակեանի տեսակցու-
թեան մը վրայ, յ'Աղէփանդիս :

(Շարունակութիւն Նախորդ Թիւէն)

Դրօշ. — Ո՛հ ի՛նչ բարեբաղդութիւն
որ երկու զաղափարակիցներ զիրար
գտանք, ուստի պէտք է մի քիչ պաշ-
խօսիլ : Սիքելի՛ բարեկամս, քանի որ այդ
զգացումը կը կրէք. չեմ կրնար հասկնալ
թէ՛ ժողովուրդի զգացումն զտաի հետ
ինչո՞ւ Միութիւն կ'առաջարկէք. ար-
դեօք կը կարծէք որ Ընդ Միութենէն
յետոյ կրկին մենք նշանաւոր դործիչներ
մնալով, Յեզ. դիմակներու ներքեւ ծած-
կուած ժողովուրդին անգիտակ մասը
պիտի կրնա՞նք շահագործել : Հաւատաի
եղիք որ այլեւս ճշմարիտ հայրենասէր-
ներուն մեծամասնութիւնը զգացին մեր
մեքենայութիւններն և ընդհանուր Մի-
ութիւն կը պահանջեն՝ որ ըսելը դիւա-
նագէտներուն և հայրենասէր անկեղծ
զրամատէրերուն վատահոլութիւններնչեւ
լով դործի ասպարէզ հրաւիրեն, սրպէս
զի յաջողին ըստ պատշաճի գումարն
հալթայթել և ազգին ներկայ տալնա-
պալի վիճակին վերջ մը տալ, որով մեր
զրամ հաւաքելու ազդեցութիւնը պիտի
կորսուի, եւ օգտախնայութեանս միջոցին
սրճարաններու թաւիէն պիտի զրկուիմ
և դուք ալ խաղաղամեք և զինեալու-
նէր յաճախելու հաճոյքէն, միեւնոյն ա-
տեն մեր գաղափարակից քնկերներ ալ
Ժքնէվի և Լճնածի մէջ հանգիստ կենք
վարենք :

Հինգ — (Չարմայմամբ) Հը՛ . . Ը՛ . .
 Ը՛ . . ասոր համար Միւթիւն կը պա-
 հանջեն հա՛. հիմա համադուեցայ որ չը
 միանալու համար Ձեր բոլոր վարանում-
 ները ճշմարիտ են եղեր. մենք կը կար-
 ծէինք թէ՛ կուսակցութիւններու միու-
 թենէն վերջ աւելի պիտի օգտուէինք,
 քանի որ այժմ պարզուեցաւ որ երկուս-
 տէք ալ միեւնոյն թաղուն նպատակի կը
 ծառայենք ըսել է «Ինքի ճանապարհ պի-
 իրա՛ն օյնայամաղ» հեռեւորոր դուք
 ձեր ապակեղբորնայումովը շարժեցէք և
 մենք ալ մեր միութենական կեդրոնա-
 ցումովը, որովհետեւ մեր վերջի գոյու-
 թիւերը այդ կախարդիչ Միութիւն բառին
 կը պարտինք, և սա ալ ըսելու չմոռնամ
 որ Պ. Ճիհանկիւլեանի, Պ. Սըլասիի, Պ.
 Ապահի, Պ. Կարօի և Պ. Հրաչի նման
 համբաւաւոր անձնուէր հերոսները գոր-
 ծիք ընելու կերպը ըստ գիտնանք, որ-
 պէտքի մեր Նաղարբէկին փիլանք վար ա-
 սածին պէս անոնք ալ մերը չառնեն եւ
 չնորհիւ ատանց անուններուն յաջողինք
 մենք ալ մատաւորապէս փայլուն տաղա-
 մը պատրաստել Նաղարբէկեաններուն
 նման:

Դրօշ. — Հիմա տեսա՞ք Թընէվական-
 ներուս թաղուն նկատումները զիտցած
 նուր պէս մեզի համամիտ գտնուեցա՞ք
 սուրեմն երթա՞ք բարի՛ երթա՞ք բա-
 րի՛ երկուստէք ալ բարեյաջողու-
 թիւն:

Այս երկու ճանապարհներուն տաք տաք վի-
 ճաբանութեան եւ եզրակացութեան յանդած
 պահերնուն, երկու ընտանեզուրկ գաղթա-
 կան խեղճ ծերուկներ ետեւնին նստած կը
 լսեն եւ անոնց մեկնեցէն յետոյ կ'սկսին խօ-
 տակցիլ:

Ա. — Լսեցի՛ր Աղդապաշտպան անուա-
 նուող գժուժ էակներուն խօսակցութիւնը:

Գ. — Անապարտի՛յո մանրամասնու-
 թեամբ:

Ա. — Հաեւ անցեալ օր «Փարոս»
 թերթի մէջ հրատարակուած «Դէպի
 Պոլիս» խորագրով և Լ. Մ. ստորագրու-
 թեամբ յօդուածն ալ կարդացած էի՛ր,
 որ վերջը վիճաբանութեան առարկայ
 եղաւ:

Գ. — Այո՛ բարձր, որ յետոյ «Փարոս»-ի
 խմբագիրը Վ. Բ. ընդդիմախօսը ակնադ-
 կելով Քաֆէի հերոսներ անուննեց, որ-
 մէ հետեւցուցի թէ խմբագիրը Լ. Մ. ի
 բարեկամն է, բայց կը զարմանամ որ
 ինչո՞ւ հացուցի որ այս խնդրին հետ առն-
 չութիւն չունեցող յօդուած մը:

Ա. — Որովհետեւ յայնժամ պէտքը
 զոսցի այս երկու պնակալէզներուն խօ-
 տակցութիւնը թերթի մը միջոցաւ հրա-
 տարակել, որպէս զի «Փարոս» ի խմբա-
 գիրը հասկնայ թէ երկու կողմն ալ Քա-
 ֆէի հերոսներ են:

Գ. — Շատ բարի, բայց ո՞ր թերթին
 միջոցաւ, յայտնի ճշմարտութիւն մ'է որ
 «Փարոս» ը կողմնակցութիւն կ'ընէ բա-
 րեկամին սիրոյն համար, «Միութիւն»
 անպատշաճ է. «Իբուռներ»-ն կ'ըզու-
 շանայ կուսակցութեանը դրպարտու-
 թենէն. «Արմենիա»-ն կուսակցականէ
 կ'ըսուի և «Հայք»-ն ալ «Մարտ»-ի հա-
 մակիր է:

Ա. — (Դ՛Ք, ի՛նչ ախմար ես պէ. երէկ
 չկարդացի՞ր նոր հրատարակուած «Կա-
 տակ» թերթին 8 թիւերը, որոնց առա-
 ջինը կ'ըսէ՛ր «պիտի ճաղկէ անխնայ յա-
 նուն բարեկեցութեան գործուած զեղ-
 ծսումներն եւ գլխավոր անուանմբ տղ-
 քատին վրայ փորձուած նոզկալի անդը-
 թութիւններն»: Այն ո՞ղջ ըլլայ:

Գ. — Օ՛ն, աճապարենք ուրեմն Գա-
 հրէ երթալ եւ Արդարն ցանկել որպէս
 զի եղբւրթիւնը անոր պատմելով շու-
 տափայլ իմացնէ անկողմնակալ եւ ճշ-
 մարտախօս «Կատակ»-ի խմբագրութեան:

Եւ ահա խեղճ ծերուկներն չողէկառքէն ելլելով, հեւ ի հեւ զիս գտան եւ սրտատրոփ պատմեցին վերոգրեալներն, որով ստիպուեցայ խեղճ ծերուկներուն փափաքին գոհացում տալու համար Զերանաշատութեան զիմեւ, որպէս զի հաճիք սոյն գրութիւնը զետեղել յառաջիկայ «Կատակ» ին մէջ մէկ անգամէն իսկ եթէ ծաւալը չներէր մաս առ մաս:

ԱՅՏՆԱՅՏ

Գահիրէ, 8)20 Յուլիս 1897

ԶԵՅԹՈՒՆ և մինչև 1895 թուականի քաղաքամբութիւնը անուամբ Պ. Աղասիի հրատարակութեան առթիւ, Քրանտայի նշանաւոր գրադեա Պ. Պետարի մի յառաջադրանէն ինքզինանում:

Վառնա, 25 Յուլիս 97

«Կապույտ» և յետոյ «Դեղին» տետրակները մեզ տեղեկացուցին արդէն, 1895 հոկտեմբեր և դիկտ. ամսուան մէջ, Զէյթունի քաղաքամբութեան և 5,000 հայերու հիանալի պաշտպանութեան նկատմամբ, ընդդէմ 60,000 թրքոյ: Բայց մենք այս գէղքերուն միայն արտաքին և Տիպոգրաֆիական պատմութիւնը զիտենք աւելաւն, ահաւոսիկ, ներքին և զինուորական պատմութիւնն ալ:

Սպաստամբական շարժման պարագըլտիներէն մին մեզ կը պատմէ, կէս առ կէս գէղքերու անակնկալ փոփոխումները, և մենք կը տեսնանք տեղի ունեցած զիւցտղութիւններ և կորսուած արիւններ, Զէյթունի այդ զիւցտղներգական ճակատն միջոցին:

Այս հրատարակութիւնը, յորում ամէն գործուղութիւնը տեղեկագրուած են, որպիսիք են, հրացանի և զանազան հորումներ ա կիրառութիւնը, ճակատամարտ և կոտորած, բռնաբարութիւնը և թափոքը, (procession) կարմիր դրօշակի և նշխարաց ի հանդէս դրուիլը: Բացառյալ անկեղծութեամբ և զեղեցիկ համարձակութեամբ այս պատմութիւնը

կ'ազդուի ամբողջ հասարակութեան և մանաւանդ երկու դասակարգի ընթերցողաց:

Ամենէն առաջ վարչական մարդոց, որոնք, առանց միջամտել ուզելու թագուցին, երկու տարիներ, որպէս զի բռնադինջ լինի մի ամբողջ ժողովուրդ, առանց հոսկնալու ինչ մարդկութեան շահը կը շփոթուէր ամբողջ եւրոպայի շահերուն հետ և առանց նոյն իսկ կամենալ յիշելու թէ՛ եւրոպան, նա մանաւանդ Գաղղիան, պոտույ և երախտագիտական պարտականութիւններ (engagement) ունէր դէպի այդ ժողովուրդ, այս, վարչական մարդիկ, որոնք հինգ տարիներէ ի վեր կը յեղինակէն Բոսքաղաքագետին սա խօսքը, «լու կը հանչնամ հայերը, այլ չեմ ճաննար Հայաստանը»: Ահա այս հայաստանն է որ լին ուզեր տեսնալ, այս Հայ Սեւ լեռն է որ ամէն ժամանակ ազատ ապրեցաւ և որուն անկախութիւնը ճանչցուելով, 1860-1870 թ. գաղղիական զիւցտղներէն պաշտպանուեցաւ, և որը եղաւ հայ ազգին ապագայ կորիզը, եթէ այսօրուան քաղաքագետները, իրենց երկրին և ամբողջ եւրոպայի իրական խաղաղութեան ապագայ մը մտածէին: Այս, չստ փոքր է որակաւն այդ Հայաստանը, բայց դարու սկիզբները աւելի փոքր էին Սեւ լեռան Սլավիան (slavie) և Սուլի (soulie) Յունաստանը և պակայն մին և միւսը ընդարձակեցան և պիտի ընդարձակեն և թուրքին վարկէնական յաջողութիւնները պէտք է որ անտես ընեն մեր աչքէն, իսլամի անփոփոխ յետա ընկրկումը, այս աղատագրեալ քրիստոնէայ ազգերու առաջ:

(Շարունակելի)

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.